

**«ՄԱՅԼԵՌ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵԶՈՐԹ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽԱՂԱՏԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՅԼԵՌ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ  
ՌԵԶՈՐԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽԱՂԱՏԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Սույն օրենքը կարգավորում է «Մայլեռ» ներդրումային ծրագրի շրջանակներում «Մայլեռ Մաունթեյն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությանը խաղատան լիցենզիայի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2.** Սույն օրենքի կիրառության իմաստով`

1) «Մայլեռ» ներդրումային ծրագիր (այսուհետ` Ծրագիր) է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած` առնվազն 15 միլիարդ ՀՀ դրամի ներդրմամբ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ վարչական բնակավայրում ճոպանուղու և 2 հյուրանոցների կառուցումն ու շահագործումը.

2) Ծրագիր իրականացնող կազմակերպություն է համարվում «Մայլեռ Մաունթեյն Ռեզորթ» ՓԲ ընկերությունը (այսուհետ` Ընկերություն):

**Հոդված 3.** Ծրագրի իրականացման շրջանակներում`

1. Ընկերությանը խաղատան գործունեության լիցենզիան տրամադրվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներին և սույն օրենքին համապատասխան:
2. Լիցենզիան տրամադրվում է Ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքում «խաղատան կազմակերպում» գործունեության նպատակով:

**Հոդված 4.** Ծրագրի շրջանակներում Ընկերությանը սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված լիցենզիայի տրամադրման նպատակով գանձվում է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 100000-ապատիկի չափով: Պետական տուրքի գծով պարտավորությունների ծագման, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, պետական տուրք վճարողների իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

**Հոդված 5.** Ծրագրով նախատեսված ենթակառուցվածքների շահագործման հանձնման պահից Ընկերությունը կարող է դիմել Լիցենզավորող մարմին «խաղատների կազմակերպում» գործունեության լիցենզիա ստանալու նպատակով:

**Հոդված 6.** Ծրագիրը չկատարելու դեպքում Ընկերությանը սույն օրենքի շրջանակներում տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցվում է՝ Ծրագրի չկատարման դեպքում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**